

ՊԱՅՄԱՆՔ

ՊԵՐԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 ծր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ծր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԱ
Տարեկան 2,60 ծրար
Վեցամսեայ 1,50 "
ԿԱՆԽԻԿ

Ծանոցման տողը
20 անդիւն



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵԻ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Redaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւ
լեւ տրուիր

ԱՀՈՒԵԼԻ ՈՃԻՐ ՄԸՆ ԱՆ

Գ. ՉԻԹՃԵԱՆ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Սարսառ՝ հայ ժողովուրդ, պաշտելի զաւակ ինչ ալ կորսնցուցիր. ողբա՛ հայ ժողովուրդ, բոլոր քաղաքներուս, անշահախնդիր գաղափարական մըն ալ զգեստնուցաւ Շահէնէն վերջ Չիթճեանն ալ սպաննուեցաւ. եղբայրսպան ձեռքերէ. խուշապուղիների վրայ ալ նոյն փորձը կատարուեցաւ, թէեւ այս ան յաջող. Այս երեք յաջողական եղբայրսպաններէն զատ Լոնտոնի դաւադիրներու առջնորդը, օրինակ Գալֆանտի մը, յայտնի համարձակ կը յայտարարեն թէ իրենց հաւաքակ կարծիք յայտնողներ պիտի սպաննուին. սա ցոյց կուտայ թէ ոճիր շարքը դեռ պիտի երկարի, եթէ հայ ժողովուրդը ան տարբեր մնայ, եթէ եղբայրսպանները իրենց արժանի պատիժը չը կրեն. չը կրնան, չարհամարհուին:

Գ. ՉԻԹՃԵԱՆԻ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԳՈՒԺԸ

Օտէսայի Ամերիկեան հիւպատոսը իր կառավարութեան հետագրած է թէ՝
«Շարաթ, Յունիս 18ին, երկու անձեր Օտէսայի մէջ սպաննած են Ամերիկեան քաղաքացի Պ. Գարեգին Չիթճեանը: Սպաննողները ձերբակալուած են» եւն:

«Բեքիսպառնիկեր վեռուսթի ոռոտական թերթը «Խորհրդաւոր ոճիրը» վերնագրով Օտէսայէ թղթակցութիւն մը հրատարակած է հետեւեալ պարունակով թեմաւ:

«Մաքուր հագուած սիրուն երիտասարդ մը, իր օթէլէն ելլելով, այս ինչ ու այն ինչ փողոցներէն անցնելով (փողոցներուն անունները յիշուած են) չլիւսեմ որ... բազմամարդ պողոտային վրայ, ցորեկ ատեն մարդու մը հետ տեսնուած միջոցին, յանկարծ դիմացի փողոցէն Յայ ելլելով՝ դաշտիններով մէկէն իմէկ սկսան ծակծկել սոյն երիտասարդը: Ժողովուրդը այս յանկարծական ու անսովոր տեսարանէն ուռաւախ չը ցրուի, ու միայն հետեւէ կը դիտէ: Ոչ ոք կրնայ օգնութեան հասնիլ խեղճ Չիթճեանին: Ու այդ անակնկալ հարուածները՝ մին միւսին ետեւէ կը միտին իր մարմնոյն, չորս հարուած գլխուն, մէկ սրտին, երկու կողորդին եւ մէկ կուրծքին եւն. ընդ ամէնը 11 հարուած:

«Այս միջոցին, երբ արդէն Չիթճեան ինկած է, Ռուս զինուորական մը ժողովուրդին մէջէն կը յառաջանայ, եւ ոճրագործներուն մէկին թեւէն կը բռնէ, միւս երկուքը կը օկսին փախչիլ: Չիթճեանի անկողնէն ձերբակալուած իրմէ աւելի հուժկու ըլլալով՝ կը յաջողի ձեռքէն խուսափիլ: Նոյն միջոցին նախնիկ մը կը հասնի եւ կրկին կը ձերբակալեն: Միւս փախչող երկուքն ալ հալածուելով կը ձերբակալուին:

«Երեքն ալ թրքականացի հայեր են, երկուքը վաճառականի եւ պանքէոի բեռնակիր, մին գործաւոր, չը գիտեմ ուր: Հայ ուսանողի մը թաքմանութեամբ կը հարցաքննուին: Կը յայտարարեն, առանց յեղափոխական խնդիր խառնելու, թէ՝ Չիթճեանը իրենցմէ բարենպաստակ գործի մը համար դրամ հաւաքած է, ու այդ դրամները իւրացուցած (?) եւ որուն վրէժը կը լուծեն եղբր:

«Սպաննուածին գրպանէն ելաւ, կըսէ թղթակցիցը, ամերիկեան քաղաքացի անցագիր մը Գարեգին Չիթճեան (պիտի ըլլայ անշուշտ Գալֆանտի Չիթճեան) եւ կարգ մը թղթակցութիւններ Լոնտոնի հետ, ու քսան անգլիական ոսկիի չէք մը:»

Գ. ՉԻԹՃԵԱՆԻ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆԸ

ԵԻ

Կ Տ Ա Կ Ը

Գ. Չիթճեանի նամակներէն կը քաղենք հետեւեալ հատուածները, որոնք բաւական են անոր անկեղծ, անձնաւէր եւ ճշմարիտ յեղափոխական մը ըլլալը անգամ մըն ալ ապացուցանելու եւ ցած դաւադիրները իրենց բոլոր լըրբութեամբը մատնանշելու:

Օտէսայէ աւրիլ 8/21 թուակիր նամակաւ Գ. Չիթճեան յուզեալ շնչով ողբացեալ Միս Շահէնի սպաննուածը կը գուժէր ու կըսէր.

«Մեր խօսքին, մեր տուած լուսաբանութեանը առջեւ սարսափահար այդ կենտրոնը (?) ապուշնեւում ձեռքը դանակ տալով եւ մեր գիւղիները մոթի մէջ, դարանի մէջ նենգութեամբ գետնը արեւն թաթաւ տապալել տալով չի կրնար զիս վախցունել որ ես ետ դառնամ. ինծի սպասող դանակները աչքիս մէջ մտնելու չափ մօտ կը գտնուին. սակայն առանց աչքս թարթելու՝ յառաջ պիտի երթամ, պիտի ցուցնեմ որ աւագ ու մի Սուրբ եւ նուիրական պարտականութիւն զիս յառաջ կը տանի սպաննուող վտանգներուն մէջէն: Հայ յեղափոխութեան ցանկալի յաղթանակին ուժը կը կայանայ միմիայն բարոյական մաքրութեանը մէջ որ կը տիրէ յեղափոխական կազմին. եւ մենք յառաջ պիտի երթանք մաքրելու. Հայ յեղափոխութիւնը. ձեռքերնիս դրեմք ենք մաքրելու վրայ. ետեւեւս պիտի ջնայինք դանակը աչքերնիս ալ խոթին, ու Շահէնի վրէժը այս ընթացքին մէջ պիտի լուծենք:

Ձեռքիս մէջ կ'ընթան փաշտոնական վաւերաթուղթ ունիմ ապացուցանելու որ Շահէնը սպաննել տալու հրահանգը Լոնտոնի կենտրոնէն Սազունի Արզումանեանց անունով դիւանարներէն ելած է:

Պիտի լուծենք Շահէնի վրէժը՝ մաքրելով յեղափոխական ասպարէզը անբարոյական ճիւղերէն եւ սնափաւ դիւանարներէ, երբ իմ ալ դիւակիս իշխաւուն լուրը առնէք՝ իմ վրէժս լուծելու համար այժմէն իմ կտակս է թէ, անխոնջ եւ յարատեւ ջանքով յառաջ գացէք մաքրելու Հայ յեղափոխական ասպարէզը:»

Օտէսա, 3/16 մայիս

«Դուք ինծի խորհուրդ կուտաք վերադառնալ նկատի առնելով վտանգը որ իմ առջեւ կայ: Ծնորհակալ եմ ձեր բնկերական տաք համակրանքէն, ամեն կողմէն ընկերներ եւ բարեկամներ նոյն բանը կը թախանձեն ինծի. սակայն քաջալերեմք անոնք

որոնք բիրտ ու դարանակալ ուժին առջեւ կուգն նուաճել ճշմարտութիւնը: Այս է հարցը ու այս հարցին առջեւ ես բոլորովին տարբեր կերպով կը մտածեմ:

«Վտանգը սակայն շատ ակնյայտի է. իմար դարանակալներուն ձեռքերը ամեն կողմ լարուած ինծի կըսպանեն: Պ. . . . Պաթուկէն կը գրէ թէ, Պաթուկի հին Հնչակեանները կը կարծեն եղբր որ ես արդէն հոն, Պաթուկի մէջ եմ ծափալ. ու օրմը մէկը հին Հնչակեաններէն հետեւեր է անձի մը զայն զիս կարծելով. եւ տեսնելով որ այդ իմ աչքիս վրայ փոխանորդս մտեր է զօրանոց՝ այն ատեն իմացեր է որ նա Չիթճեանը չէ:

«Շահէնին (Միսոյին) սպաննուելու ատոյգ է: Ստոյգ է նաեւ որ սպաննուած է Արզումանեանցի եւ Սազունիի պաշտոնական հրահանգներովը:

«Հին Հնչակեաններ ինծի յայտնեցին որ Պաթուկի եւ Պագուկ թէ առանձին նամակներով եւ թէ նոյնիսկ հեռագրով հրահանգներ գացեր են իմ ու Շահէնի մասին. այդ հրահանգներուն բնութիւնը եղած է մեզ ոչնչացնել տալ. ինչ որ իմ ձեռքս անանցաւ մի ընդհանրական շրջաբերական՝ Սազունի-Արզումանեանցի կենտրոնէն հանուած պաշտոնական ստորագրութիւններով եւ կնիքով.»

«Միսոյին պէս յայտնի, ու ամբողջ ազգին սիրելի հերոսի մը սուրբ անունը Արեւի արիւնէն շատ աւելի զօրաւոր ձայնով պիտի խօսի Լոնտոնի նստող երկու ապուշ ոճրագործներուն դէմ. ու Միսոն անտէր չէր.»

ՈՃՐԱԳՈՇՆԵՐ

Վերջին պահուն տեղեկանում ենք ոռոտաց թերթերից, որ մայիսի 30 ին (հ. տ.) Օգե ստյում սպանել է Գարեգին Չիթճեան:

Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, «Վերապազմալ» Հնչակեան մարմնի եւանդուն անդամներից մէկն էր, որ երկար տարիների ընթացքում—սխալ թէ ուղիղ ճանապարհով—աշխատում էր յօգուտ մեր ընդհանուր ազգային դատի: Ինչ շաղատութիւն էլ որ տրւի այդ սպանութեան, նա կը համարւի մի ծանր ոճիր եւ մի անհրժեշտ յապացոյց նրա հեղի. նախնիքի բարոյական անանկութեան: Երբ հակառակութիւն կայ անհատների եւ խմբերի միջեւ, կարելի է մղել օրինաւոր կռիւ, կարելի է վիճել, դատի հրաւիրել ամբաստանւածին: Բայց «յաղթանակը» տանելու համար գիմն դաշտին, թոյնի կամ մատնութեան,—դա քաղաքական գործ չէ, ալ քրեական թալփայականութեամբ կուրացած ոճրագործների:

Մենք ուրախ կը լինէինք յայտարարւած տեսիլ, որ այդ քաղաքի գործողութիւնը, ինչպէս եւ ֆոթիոս տեղի ունեցած Շահէնի սպանութիւնը՝ ոչ ուղղակի եւ ոչ իողմնակի առնչութիւն չունեն այս կամ այն յեղափոխական խմբակի հետ եւ որ հայ գաղափարական շրջանները ազատ են այդ տուտակ ելեւնափորձերից:

ԳՐՕՇԱԿ

Բայց պիտի չկրնան ուրանալ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հեռագիրը հաղորդեց թէ Նասրէտին Շահը սպաննող Պապի աղանդաւորները — եթէ ներքին է միայն աղանդաւոր կոչել — կրկին գլուխ ցոյց տալ սկսած են եւ այդ պատճառաւ շատ մը պարսիկ բարձրաստիճան պաշտօնեաներ բանտարկուած են :

Հեռագիրն հաղորդած այս կարճ լուրը մեզ առիթ կուտայ քանի մը շաբաթներէ ի վեր Պարսկաստանի եւ մասնաւորապէս Թեհրանի ու Դավրէ-ժի մէջ տեղի ունեցող խռովութիւններուն անդրադառնալու : Մենք արդէն Իրաւունքի թիւ 44ին մէջ համա-ճատակի յիշած էինք Թեհրանի Նամա-կատան ընդհանուր տեսուչ հայազգի Մ. Միրզա Միրզահանցի դէմ 151) պարսիկ պաշտօնեաներու բողոքը, գործադուրը, եւ ի վերջոյ դաւադու-թեան մը երեւան գալը ու Շահին հը-րամանով դաւադիր 8 պետերուն աք-սորումը : Թեհրանէն թղթակցութիւնէ մը կիմանանք թէ Շահին բարձրագոյն հրամանով աքսորուած եւ բանտարկ-ուած դաւադիրները ներման արժա-նացած եւ վերստին իրենց պաշտօնին անցնելու արտօնութիւն ստացած են :

Ասկայն դժուար է թէ թղթատարա-կան վարչութիւնը զանոնք կրկին գործի դնէ :

Նամակատան, եւ մաքստանց հայ պաշտօնեաներու դէմ սկսող այս շար-ժուած կարծողներ կան թէ պարսիկ-ներու դէպի Հայերը ունեցած հակա-կրօնեան արդիւնքն է . բայց Նոյ-Ղարի Թեհրանի թղթակցիցը, Սատուրն հետեւեալ տողերով այդ կարծիքին անտեղի ընելը եւ խռովութեանց բուն պատճառները կը բացատրէ :

Այն օրուանից, որ Պարսկաստանի մաքսային եւ պոստային վարչութիւնը յանձնուեց բելգիացի Նոսին եւ իւր համաքաղաքացի մի քանի ուրիշ բել-գիացիներ, երկրի այդ երկու նշա-նաւոր եկամուտների աղբիւրները կերպարանափոխելով միլիոն թիւմէն-

ների աւազակութեան դռները փակ-ուեցին շատ պարսիկ պաշտօնեաների առաջ... եւ ինչ ասել է, որ այդ ա-ւազակութեան մշտաբաց դռները Նո-սին (որ առաջին քայլում իսկ ուխտել էր հայ պաշտօնեաներ չընդունել իւր վարչութեան մէջ) չյաջողուեց պարսիկ գործակալի ձեռքով փակել, որովհե-տեւ գողն էլ ունի իւր հեռատես քա-ղաքականութիւնը, ուստի իւր նպա-տակին վերջնականապէս հասնելու հա-մար ստիպուած եղաւ իւր ուխտը խախտելով գիմել հայի օգնութեանը : այդ օրուանից մաքսի եւ պոստի վար-չութեան մէջ իրկրորդական եւ Նոյն իսկ շատ քառաջնակարգ պաշտօնեաներ ստացաւ տեղիս հայ երիտասարդու-թեան վստահելի մասը : Այս վերջին-ների կարգապահ եւ հաւատարիմ բը-նաւորութիւնը՝ բելգիացի կազմա-կերպողներին տուեց այն, ինչ որ երկար ժամանակից ի վեր Պարսկա-ստանում չէին կարողանում ձեռք անց-նել այսինքն վարչութիւնների մէջ կատարեալ կարգապահութիւն, ճշտա-պահութիւն, հաշուի եւ հաշուապա-հութեան մաքրութիւն եւ վերջապէս գողութեան եւ խռով ավազակու-թիւնների անյայտագում, որ պար-սիկ գործողներին մէջ ժառանգական սրհնստ էր դարձել եւ առանց որի նրանք ապրել չէին կարող (ախար ինչպէս պիտի ապրի մի գործակա-տար, որ ոռնիկ չունի, եթէ ոչ պաշ-տօնական գողութիւններով, որից Նոյն իսկ աչք է գոցում իշխող կառավա-րութիւնը...) : Այն այստեղ կանգ առաւ պարսիկ գործող պաշտօնեան, համեմատեց իւր անցեալը ներկայի հետ եւ հանգին տարբերութիւն նկա-տեց . նա անցեալում ստանում էր ամսական 15-20 ռուբլի, եւ բացի այն, որ օրական 8-8 ռուբլի տան ծախք էր վճարում, պահում էր նաեւ 2 կամ 3 աղախին, 8-10 ծառայ եւ շատ անգամ էլ 4 կամ 5 ձի եւ այլն եւ այլն... Իսկ այսօր թէեւ ստանում է 50-60 ռուբլի, այսինքն անցեալի եռապատիկ կամ քառապատիկը, բայց եւ այնպէս, դժուարութեամբ է կա-րողանում հոգալ իւր տան ծախքը, ուր միաց ծառայ, աղախին եւ ձիեր պահելը, ինչո՞ւ, որովհետեւ հայի

հաւատարմութիւնը եւ պարկեշտու-թիւնը նրան արգելում էր անսանձ գողանալ եւ կողոպտել եւ փառաւոր ապրել . բնական էր, որ այս ամե-նից յետոյ պարսիկ գործաւորը յուզ-ուէր եւ նոր ուժով ծանրութիւնից ազատուելու միջոց փնտռէր :

Իբրեւ ապացոյց մեր ասածներին, այստեղ առաջ ենք բերում մի նշանա-ւոր պարսիկ հետեւեալ խօսքերը, որ ասել էր պ. Միրզահանցին . «Եթէ դուք հայերի չլինէք, եւրոպացիք այստեղ ոչինչ անել չեն կարող, ուս-տի պարտաւոր ենք կամ ձեզ՝ հայերը ասպարէզից հեռացնել եւ կամ թէ պարտաւորեցնել ձեզ, որ մեզ հետ համերաշխ գործէք, որպէսզի եւրո-պացիներին մեր միջից դուրս անել կարողանանք» :

Դավրէժէն ուրիշ թղթակցութիւն մը կուգայ աւելցնել թէ դժգոհու-թիւնը միայն պարսիկ պաշտօնեաներէ առաջ չգար, այլ կրօնաւորներէն, որոնք զազտին բարբաղանաւ կընեն գողութիւնով աղէտ ժողովուրդի կրօնա-կան զգացումները, յայտարարելով թէ իրենց սրբազան կրօնը ոսնակոխ կըլ-լայ քրիստոնեաներէ, մանաւանդ եւ-րոպացիներէ ձեռքով, որոնք պաշ-տօնեւոր կը կոչուին, սգելից ըմ-պելի կը տարածեն պարսիկներու մէջ, նոր տեսակ դպրոցներ կը բանան եւ օտար լեզուներ կը սորվեցնեն, հիւ-րանոցներ կը հաստատեն եւ Աստու-ծոյ ստեղծած ճամբաները կը սրբապղ-ծեն ու կուղեն «չէյթմանի մաշին» եր-կաթուղի շինել եւն : Այս գրգռու-թեանց հետեւանքով անազին ցոյց մը տեղի ունեցած է Դավրէժի մէջ մայիս 23ին : Խանութները, պետա-կան հաստատութիւնները նամակա-տանը, մաքսատունը՝ զրամատները գոցուած են եւ ոչ մէ քրիստոնեայ անէն դուրս չէ ելած ու գրեւ չազա-րաւոր ուսանողներ, լլաններ եւ սեյիտներ ժողովուրդը առաջնորդած են զահաժառանգ կառավարչին պալատը եւ սա չորս պահանջներով բողոքագիր մը ներկայացուցած են .

- 1) Դիմեաւորները գոցել եւ ըմ-պելիք վաճառումը արգելել
- 2) Եւրոպացի մաքսապետ Բրիմը

մէկ օրէ հեռացնել Պարսկաստանէ :

3) Օտար լեզուներ աւանդող պարս-կական դպրոցները գոցել :

4) Դավրէժի մէջ հիւրանոցներ չեւանեալ :

Գահառառանգը կրօնամուլ խու-ժանի բազմութեան հաւաքեալ, ան-միջապէս այս չորս պահանջին գոհա-ցում հրամայած է : Կրօնաւորները ճամբայի եւ երկաթուղիի շինութե-անց ղէմալ ցոյց ընելու պատրուակ կը փնտռեն եղբր. եւ թղթակց կա-ւելցնէ թէ այս ցոյցի սրբազան հրա-մանը եկած է Մաշայի մեծ կրօնա-պետէն : Ուստի զահաժառանգը ստիպ-ուած է ուրիշ կողմերէ հեծելազօրք բերել : Հեռագրական լուրը Պապինե-րու ձեռքակալման մասին, մեծ կրօ-նապետի հրամանին միացնելով, կը կարծենք թէ Պարսկաստան մեծ դէպ-քերու նախընթացին մէջ կը գտնուի :

Գ.

ԱՌՆԵՐԱՆԳՈՒՄՆԵՐ

ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

— 1905 —

ԲԱՎՈՒՆ, 26 մայիսի. — Վերջին 4-5 տարուայ ընթացքում մի վերին սո-տիճանի տիրաւոր իրեւոյթ է նկատ-ւում Բազումը : Այդ երեւոյթը հայ աղջիկների առեւանգումն է թուրքերի ձեռքով : Պատմեց մի երկու դէպք :

Դեռ երեք տարի առաջ թուրքերից մէկի աչքին շատ դուր է գալիս իրենց հարեան մի հայ աղջիկ, ուստի թուր-քը վճռում է նրա հետ ապրել եւ այդ մտքով առաջարկութիւն է անում նրա եղբորը : Երբ վերջինս սպառնալով մերժում է թուրքի անաճախ յանդուգն առաջարկութիւնը, խորամանկ թուր-քը կեղծաւորութեամբ աշխատում է համոզել աղջկայ եղբորը . որ ինքը կատակ է անում եւ սկսում է աւելի բարկամական : շարաբերութիւններ հաստատել նրա հետ : Բանը վերջա-նում է նրանով, որ երկու շաբաթից յետոյ թուրքն առաջնակի մի գնդա-կով գետին է տապալում իւր քրոջ ա-րտաւորուած պատիւը պաշտպանող խեղճ երիտասարդին : Թէեւ թուրքը

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(88)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱՌԱՐԴ ԿԻՆԸ

Մերօ Կախար Սէլվինն ամեն բան հասկցած էր եւ գիտէր թէ Մեծ հանրմը Զէրքէզուհի մըն էր եւ թէ փաշային նկատմամբ մայրական զգացում մը չէր կրեր : Հետեւաբար կախարդ ձեւացող կնոջ յայտնած էր թէ ինչ կերպով Մեծ հանրմին կարող էր սիրելի ըլլալ :

Ուստի կախարդ կինը, երբ Մեծ-Հանրմին քովը գնաց, պատրաստուած էր առաջուց :

— Աստուած երբեմն մարդոց բերնով կը յայտնէ մեր ճաշատարիքը, մրմնջեց Մեծ-Հանրմը, անանկ չէ՞ :

— Այո՛, Մեծ-Հանրմ, աստուր տարակոյս չկայ, չեւտեց կախարդ կինը :

— Խօսէ՛ իմ վրաս... դողդոջաց Մեծ-Հանրմը :

Կախարդ կինը գորգին վրայ փռեց դաշկինակը եւ աւարտեց բակլայի ու համրիչի ու ուրուքի հատիկ-ները : Մէկը վեր դրաւ, միւսը վար առաւ... տե-ղափոխեց ու խառնեց իրար զանոնք : Աղօթքի մը

պէս բան մը մրմնջեց ու քնի մը անգամ յորանջեց : Յետոյ խղիւղած ձայնով մը ըսաւ .

— «Դուք թուրքներ մը պէս շարունակ փակուած ես եղբր ոսկի վաճառելի մը մէջ : Կեանքդ լալով անցուցած ես : Աշխարհքը քու վրադ զմայլած առեն դուն սեւը մտած կապելիք : Զըկայ յոյս մը որ սըր-տէդ կամ հոգիդ անցնի, ամեն բանէ վնասած ես :

Ո՛հ, ճշմարիտ է, բարի կախարդուհիս, ընդհա-տեց Մեծ-Հանրմը : Խօսածներուդ մէջ լաւ մը չըկայ որ իմ սեւ ճակատագրէս առնուած չըլլայ : Միայն երկնքի մը հընդամեկ կընար ըսել ինծի... հետե-ւաբար կը հաւատամ որ դուն անոր բերնով կը յայտնես :

— «Բայց յոյսդ Աստուծոյ վրայ դի՛ր, յարեց կախարդ կինը :

Մեծ-Հանրմը չը կըցաւ իր արցունքները զսպել : Զեռքը տարաւ աչքերուն ու սկսաւ հեծկտալ :

Կախարդ կինը վերջապէս քան ըլլալով իր խօսքերը, մեքենաբար ոտքի ելաւ ու մեկնելու պատրաստուե-ցաւ :

— Զը մոռնաս դիւս, հա՛... մրմնջեց Մեծ-Հանրմը :

— Ո՛հ... վաղն ալ կուգամ, չեւտեց կախարդ կինը :

— Ո՛հ, այո՛, վաղն ալ եկո՛ւր... միշտ եկո՛ւր... վրայ բերաւ Մեծ-Հանրմը :

Կախարդ կինը մեկնեցաւ :

Կախարդ կինը յաջողած էր իր դերին մէջ, Մեծ Հանրմին երկու աչաց լոյսը դարձած էր եւ օր մը չէր անցունել, առանց ապարանք յաճախելու : Եւ սակայն իր իղձը լեցուած չէր... Ապարանքին մէկ անկիւնը, փաշայի հարեմին մէջ, թշուառ հա-

յուհի մը կը մնար՝ որ Սէլվին էր, անոր քով կու-ղէր երթալ...

Շաբաթ մը անցած էր :

Օր մը Մեծ-Հանրմը խնդրեց որ միտին Սէլվինն առանձնարանը երթային ու անգամ մըն ալ անոր հետ տնտնուէին :

— Ո՛հ, սիրելի կախարդուհիս, մրմնջեց Մեծ-Հա-նրմը, գիտցի՛ր որ այս ապարանքին մէջ ամենէ՛ն սիրածս է ան ու սրտիս ամենէ՛ն մօտեկը Գնդանի՛ է... հուրի՛ մըն է ան :

Կախարդ կինը խնդութեան խելայեղ եղած՝ չը կըցաւ բառ մը արտասանել : Իր աչքերը հրափառ բողոքով մը համակուցեցին : Մեծ-Հանրմին ետեւէն դողդոջալով Սէլվինն սենեակը առաջնորդուեցաւ :

Սէլվին՝ բազմոցին վրայ ընկողմանած, մէկ ձեռքը փափուկ այտերուն վրայ դրած, խարտաչ մազերը ուսերէն վար թափվեալ, բերանը վարդաւրակ չըր-թունքով մը զոցած եւ հրեշտակային արտայայտու-թեամբ մը անուշցած՝ կը քննարար :

Մեծ-Հանրմը պահ մը կեցաւ... դիտեց անոր յանկուցիչ կերպարանքը, դիտեց անոր աղուր այ-տերը, որոնց վրայ թօշնած էին տաք արցունքնե-րը... դիտեց, այո՛... ու կարծես թէ չը հա-մարձակեցաւ քայլ մ'առնելու, չի՛ համարձակեցաւ անոր քաղցր քունը խոզվելու : Երկար ատեն վա-րանած միաց... յետոյ մօտեցաւ Սէլվինն ու ձայ-նեց .

— Սէլվին, Սէլվին...

Սէլվին աչքերը բացաւ թէ չէ, չնդոստ վեր ելաւ ու համբուրեց Մեծ-Հանրմին ու անոր ընկերացող կնոջ ձեռքերը :

Պի քանի որ բանտարկուեց, բայց յետոյ երաշխաւորութեամբ արձակուեց բանտից (կաշառքի չհոգնել)

Ար ամիս առաջ մի ուրիշ դէպք պատահեց: Թ. քաղաքացի բազում բնակ մի հայ ընտանեկան յարաբերութիւններ է սկսում մի հարուստ թուրքի հետ. գնում գալիս են իրարու տուն, լոտո, թոշիթ, գոմինո, նարգի են խաղում: Եւ այլն, Հայը ունեւում է 17 տարեկան մի գեղեցիկ աղջիկ. թուրքն առաւելապէս մտերմանում է վերջինիս հետ: Այդ մտերմութեան հետեւանքն այն է լինում, որ թուրքը հայ աղջկան փախցնում է 30 վերստ հեռու գտնուող Մարգարեան թրքաբնակ գիւղը եւ վերադարձնում է նրան 4-5 օրից յետոյ: Գործն ընկաւ դատարան, եւ՝ աղջկայ հայրը... կարծեմ հաշտուեց:

Դարձեալ մի ուրիշ դէպք: 14 տարեկան մի Հայ որբ աղջիկ ապրում էր իւր մօրաբոլոր մօտ: Մի ամիս առաջ մի հարուստ թուրք գիւմում է աղջկայ մօրաբոլոր ամուսնուն եւ պահանջում է, որ այդ աղջիկն իրեն տայ, այլապէս սպառնում է սպանել: Հայը ոչ թէ միայն մերժում է, այլ եւ թուրքի սպառնալիքի մասին յայտնում է իշխանութեանը: Դրանից երկու շաբաթ կամ 20 օր չանցած թուրքն իւր մի քանի ընկերների հետ վարանցովսկայա բանուկ փողոցում յարձակում է խեղճ աղջկայ վրայ այն ժամանակ, երբ նա ռեստորանի մօտ գնում, ձգում է պատրաստի կտորք եւ քնել է տալիս ուղղակի Բաշալարի: Այստեղ մի ամբողջ օր պահուց յետոյ գիշերուայ ժամը 1-ին աղջկան թրքական չարսաւի մէջ փաթարած նստեցնում է երկաթուղու գնացքը եւ փախցնում է Պետրովսկ: Աղջիկն ամենեւին ձայն չէ հանում սարսափից, որովհետեւ թուրքը, ատրճանակը չուի տակ կապած, շարունակ սպառնում է, որ եթէ ձայն հանելու լինի, կսպանի: Թուրքն երբ օր պահում է աղջկան Պետրովսկում, Աղջկայ մօրաբոլորն ու ամուսինը եղելութիւնը յայտնում են ոստիկանութեանը: ստկայն առեւանգուեց եւ յարեց:

դին գտնել չեն կարողանում: Զերբա-կալում են թուրքի աղգականները, որոնցից վերջապէս իմացւում է, որ առեւանգողը փախել է Պետրովսկ: անմիջապէս միջոցներ են ձեռք առնում, եւ առաջակը բռնում է այն ժամանակ, երբ նա իւր զոհի հետ Պետրովսկից ճանապարհուելիս է եղել գէպի Գորգնա: Աղջկան յետ բերին եւ յանձնեցին իւր մօրաբոլոր, իսկ թուրքին եւ ուրիշ երեք թուրքերի բանտարկեցին երկու օր, յետոյ բաց թողին: (Կաշառքի չհոգնել)

ՆՈՐ-ԴԱՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սրվիկն 10 Յունիս 1903

Ամսոյս ծան սեղոյս ամօ. տէր վաղինակ հօր նախնաձեռնութեամբ եկեղեցական ու դպրոցական սիրուն հանիւս մը սարգսեցաւ, ի պատիւ Մայր աթոռոյ 1600 ու. եակին, Երկու օր առաջ յայտարարութիւններով ծանուցուեցաւ պողովուրդին: Ետեւոր՝ որոնք ընտանեօք ջերմուկները երթալու պատրաստուած էին. բետաճգիւմ ներկայ գտնուեցան հանդեսներուն: «Եւս առ աւելի» ժամանակ. մասնաւոր կերպով բացատրեց օրուան հանգիսին նշանակութիւնը:

Պատարագին վերջ դպրոցական աշակերտը եւ աշակերտուհիք ազգային երգեր երգեցին եւ արտասանութիւններ ըրին եւ ժողովուրդը գոհ եւ ուրախ մեկնեցան եկեղեցիէն:

ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ

Շնորհակալութեամբ կը ժանուցազենք թէ՛ ի նպաստ Զէյթունի հիւանդ մանուկներուն՝ բողոքի ազգայնոց միջ կատարուած հան-

գանակութեան արգելքը յանգած է 838 (ուրիշ հարիւր երեսուն ե. ռեք) լէվի:

Յանձնախումբս սոյն գումարը Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին եղած է՝ խնդրելով որ ուղղակի իր նպատակին յատկացուի:

Ազգ. գործ. կարգ. Յանձնախմբի Առեւտրապիր Առեւտրապետ Տօք. Պ. Օրմանեան Ե. Քիւրտեան (Կնիք)

10 Յունիս 1903

Ֆիլիպէ

ԱԶԳԱՅԻՆ

Քաղաքիս նորակազմ Աղբատախնամը իր կիրակի օրուան նիստին մէջ ընտրեց իր մնայուն Գործ ժողովը հետեւեալ անձերէ

- Տիար Ն. Բէստանեան
- « Օ. Ճամբեան
- « Ս. Սէմէրճեան
- « Պ. Քիւրթեան
- « Գ. Տանապաշեան
- « Յ. Աղապարեան
- « Մ. Գարագաշեան

Իսկ ընդհ. ժողովոյ դիւանը կազմուեցաւ հետեւեալներէ,

Տիար Նշան Սէմէրճեան

« Յ. Գուրպէթեան

Նպաստից Յանձնաժողովը իր վերջին նիստին պատրաստեց շրջաբերական մը, որով յորդոր կը կարգայ Մայրենի լեզուն դասագիրքերուն ծաւալման. այդ շրջաբերականը Պատրիարքարանը պիտի ղրկէ բոլոր հայ վարժարաններու հոգաբարձութեանց եւ առաջնորդարաններու, որպէս զի ասոնք ալ իրենց կողմէ յորդոր կարգան նոյն գրքերու գործածման համար:

— Պատրիարքը նպաստից Յանձնաժողովոյն հաղորդեց Տ. Պատրիարքին եղեղական մահը եւ յիշեց հանգուցելոյն որբերու ըրած նպաստները, յայտնելով որ 14,500 ֆր. նուիրած էր ինքնաբերաբար, որուն շնորհիւ կարելի եղած էր Զէյթունի որբանոցը հաստատել, Յանձնաժողովը իր խորին վշտակցութիւնը յայտնեց եւ յիշելով նաեւ այս առթիւ հանգուցեալ ժամհարանցի ըրած նպաստները, պատշաճ ժամանակի վերապահեց որբանոցներու բոլոր հանգուցեալ բարեբուրներու համար հոգեհանգստեան պաշտօն կատարել:

— Կիրիկիոյ վիճակներուն մէջ 33 գիւղական վարժարաններ բացուած են, ասոնց համար ըստ նոր կարգադրութեան ամսական 35 օսմ. ոսկի նպաստ սահմանուեցաւ: Այս գումարը պիտի ղրկուի Կիրիկիոյ Ս. Կաթողիկոսին, Կիրիկիոյ թեմներուն վարժարանաց եւ որբանոցներու կարգադրութիւններն ալ Նորին Սրբազնութեան յանձնուած են:

— Մուշէն, Բաղէշէն եւ Մալազկերտէն Պատրիարքարան հասած գիրքեր խառն ժողովը նկատողութեան առնելով տեղեկացաւ թէ երկրաշարժէ արկածները ծայրայեղ կարօտութեան մէջ կը գտնուին եւ ազգ. կարեւոր հաստատութիւններ, եկեղեցիներ ու վանքեր քարուքանդ եղած են եւ ժողովուրդը զուրկ մնացած է հոգեւոր մխիթարութենէ: Ուստի ժողովը Պատրիարքին յանձնեց սկսուած հանգանակութիւնը արգիւնաւորելու համար կարեւորն ի գործ դնել եւ ժողովրդեան կարօտութեան համար դարձան տանիլ:

— Ռուսմանիոյ կալաց քաղաքի եկեղեցւոյն մատակարարութեան

— Մտիկ ըրէ՛, Սէլվի՛, մըմնջեց Մեծ-Հանըմ. անա՛ կախարդուհի մը՝ որ ճակատագրի ճշմարիտ դուշակութիւններ կընէ, կընդունի՞ս որ քու վրադ խօսի:

Սէլվի կախարդուհիին երեսը նայեցաւ ու մըմնջեց:

— Ան որ դուն կը փափաքիս, Մեծ-Հանըմ, ես սիրով կընդունիմ:

— Լա՛ւ ուրեմն, ես կը փափաքիմ որ, խօսի: Վրայ բերաւ Մեծ-Հանըմը:

Ան ատեն կախարդուհիին իր սովորական ձեւովը նստեցաւ, պէտք եղած դարձուածքները կատարեց ու ըսաւ.

— «Ի՞նչպէս յայտնեմ... նպատակ մ'ունիս... անոր համար կը մտածես... բայց մէկը կայ որ ձեռքդ կը բռնէ... կը պաղատի՛... ու դուն կը լսես անոր ձայնը... Մի՛նակ չես... մէկը կայ որ կառապնորդէ քեզ... ուրիշ մըն ալ կայ որ կարաստուէ քեզի հետ... վերջապէս, անդունդ մը կայ քու առջիդ, որուն վրայ ճառագայթ մ'ինկած է... Դուն բարի ես ու բարութիւնն է որ քու ձեռքդ կը բռնէ: Ետտ լացեր եւ, շատ տառապեալ ես... բայց յոյսը քու սրտիդ մէջ կեանք մը դրած է... Կը տեսնեմ որ միջին ամպ մը ծածկած էր քու երջանկութիւնդ, ու այդ միջին ամպը կը բացուի, կը հեռանայ... Կը տեսնեմ որ վանդակիդ դուռնէն կին մը ներս կը մտնէ ու քու վիշտերդ կ'ամոքէ... Կը տեսնեմ որ ձեռք մը դուռն կուգայ մուկին մէջէն ու քու ձեռքդ կը բռնէ»

Կախարդուհիին լոնց ու թաշկնակին վրայ փռած բակլայի, համրիչի ու ուլունքի հատիկները հաւա-

քեց եւ յարեց:

— «Այսչա՛փ է... վերջացա՛ւ, Հանըմս:

— Շնորհակալ եմ, գողգողաց Սէլվին, որուն աչքերը լեցուեցան տաք արցունքով մը: Ու կախարդուհիին հետ դանիճը մտաւ:

Սէլվի սկսաւ մտածել:

— Ո՞վ էր այդ կինը... ի՞նչ կը նշանակէին իր խօսքերը:

Զէր հասկնար... չէր գուշակեր: Իրիկուան դէմ՝ Միւրս Ախպար պարտէզին կողմէն քարով մը փաթթած թուղթի կտոր մը նետեց իր պատուհանին մէջ, ինչպէս կընէր ամեն ատեն:

Սէլվի առաւ զայն, բացաւ ու կարդաց: Միւրս Ախպար այդ գրութեան մէջ կը յայտնէր կախարդուհիին ո՛վ ըլլալը...

ԿՈՏՈՐԱՍԻ ԶԱՅՆԸ

Ամբողջ նահանգը սարսափի մէջ էր:

Գեղացիները չէին համարձակեր իրենց տեղերը վերադառնալու, չէին համարձակեր իրենց արտերը հերկելու երթալ: Մուրալով ապրել էին ձմեռուան աղիտաբեր օրերու մէջ... անօթի՛, ծարա՛ւ ու մե՛րկ անցուցեր էին՝ քաղքին փողոցները թափառելով: Հիմակ որ գարունը եկած էր, հիմա՛յ որ արտասահմանի բարերար ձեռքերէ հասած օգնութիւն մը կը խոստանար երկրապորժութեան համար իրենց պէտք եղածները հայթայթելու, անա՛՛ կոտորածի ձայնը կը լսէին...

Կառավարութիւնը զինած էր քուրտները մարթինի հրացաններով. միեւնոյն ատեն տարող նահանգը զինուորական շղթայի մը տակ առած էր, որպէսզի դուրսէն ու եւ օգնութիւն մը չը հասնէր:

Օ՛հ, դուրսէն դարհուրելէ էր:

Յեղափոխական առժամանակեայ կառավարութեան կը մնար վերջին ճիգ մընել՝ արգիլելու համար կոտորածը: Այդ պատճառաւ, իրենց լիազօրներկայացուցիչ մը ղրկուեցաւ վանական Անդրիոյ հիւպատոսին քով, Հիւպատոսը՝ կեղծ ցաւակցութիւն մը յայտնելով հանդերձ Հայ ժողովուրդի թշուառութեան վրայ, հետեւեալ պայմանն առաջարկած էր.

— «Վստահաբար կընեմ Զեղ թէ կոտորածը տեղի պիտի չունենայ, եթէ դուք մասնաձիւ ընէք քաղաքը ապաստանող յեղափոխականները:

— «Որո՞ւ մասնաձիւ ընելու եմ, հարցուցած էր վանական:

— «Կառավարութեան, նկատել տուած էր հիւպատոսը:

— «Ինչպէ՞ս, պարոն հիւպատոս, կը կարծէ՞ք որ դաւաճանութեան պաշտօն մը յանձն առնելու եկած եմ:

— «Առաջարկած պաշտօնս դաւաճանութիւն մը չէ՞:

— «Հապա՞:

— «Կառավարութեան ու երկրին ծառայել է: Ըսել կուզեմ թէ՛ խռովարարները պատժել տալով ժողովուրդը կոտորածէ մը կարող էք ազատել:

(Շարունակելի)

վերաբերեալ կանոնադրեր՝ որ վա-
ւերացման համար Պատրիարքա-
րան զրկուած էր, Ազգ. Սահմա-
նադրութեան հիման վրայ ինչ ինչ
բարեփոխութեան ենթարկել հարկ
դառնուած է, այնպէս որ Ռուսա-
նիոյ բոլոր հայ եկեղեցիներուն
համար գործադրելի ըլլալ. այս
պատճառաւ միւս եկեղեցիներու
կանոնադրերն ալ բերել տալ և
քննելով ծրագիր մը պատրաստել
որոշուած է:

— Ստացանք Ռուսոստէն «վե-
րածնութիւն» անունով շարաթա-
թերթ մը, որուն առաջին թիւը
կը պարզէ թէ Նազարբեկեան
եղբայրասպան խմբակին մէկ նոր
օրգանն է:

Այդ առաջին թիւին մէջ սար-
սափող տեսանք Սապահգիւլեան
հրէշին Ամերիկայի մէջ հրատա-
րակել սկսած «Երիտասարդ Հա-
յաստան» շարաթաթերթէն արտա-
տպուած սխալ մը որ իր էութե-
թեամբ վեհ. Կաթողիկոսին դէմ
դաւաճանութիւն մըն է, հրէշա-
ւոր մատնութիւն մը: Եւ ինչ
կ'սպասուէր Սապահգիւլեանէ մը
որ կիրքի և հաճոյքի համար ա-
մէն նուիրականութիւն ոտքի տակ
կ'առնէ:

— Քաղաքիս հայ հասարակու-
թիւնը շեղմ փափաք կը յայտնէ
և պարտք կը դրայ ողբացմալ
Շահէին և Չիթեանի համար հո-
գեհանգստեան արարողութիւն կա-
տարել տալ յառաջիկայ կիւրակէ
տեղուոյս եկեղեցւոյն մէջ:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթնայպօլտան Թաշնթզս պիւ-
տիւրիտիկի իւլէ, էրզուրմա եւ.
զըն պիւր մանասթըր Գիւրտէր
թարաթընտան սոյուլմուզ վէ ալ-
թըրահիպ գաթիլ իտիլիշ, Բէզա
օրատան իքի քիւմէթը Իրագ
պուլընան պիւր քէօյի սոյմուշար
վէ պիւր քիշի գաթիլ իթմիշէր,
Թիւրք ասքերի միւտաթէլէ իթ-
մէմիշ:

Կէշէն չարմապա կիւնքի նօմէ-
րօմըզտա եազմըշ օլտըղմըղ իւզ-
րէ, Գիւրտէրին էրզիւնան սան-
ճաղընտա Կարնի քէօյի վէ Ս
Լուսաւորիշ մանասթըրըն սոյմուշ
վէ պիւր քիշի գաթիլ իթմիշ օլտըզ
լարընը խուսուսի պիւր մէթընպ
պիւտիւրմըշ իտի:

Թաշնթզս պիւտիւրիլէն տաթի
այնը վուզուաթ օլմալը տըր, զի-
րա էրզիւնկան էրզընու վիւայէ.
Թի տաթիլինտէ օլտըղը կիպի-
րէվայէթ եէքտիկէրինէ միւթա.
պըզ կէօրիւնիօր. Թաթիւլաթը
իլէրտէ անյալըլը:

— Սթիւպտէն ալընան պիւր
հափատիսէ պէնաէն, Ալպանիա.
տաթի օրտընըն սէր գօմանտանը
միւշիւր էօմէր Բուտի բաշա՝ ալ-

տըղը էմիր իւզրէ, օրտընըն
պէօյիւկ գըսմը իլէ պէրապէր՝
Պուլկարիա սինօրընա տօղրու-
հարէքէթ իտէճէք իմիշ. զաթէն
Թիւրք հիւքիւմէթի պու թարա-
ֆա քիւլիյէթիլի ասքեր թէճէմմիւ
իթմէքտէ տիւր:

Պազը ճէրիտէլէրին վերտիկի
մալիւմաթա պէնաէն, Թիւրք աս-
քէրլէրին պուլկար սինօրընտա
կիւն պէ կիւն արթըրլմասընտան
տօլալը Պուլկարիա աճէնթի Սա-
րազմատան իյազհաթ իսթէմիշ:
Սաարազմա պու պապտա քէնտի-
սինին մալիւմաթը օլմաթըղըն պէ-
հանէ իտէտէք, սէրասքէրէ սօրուպ
պէշ կիւնտէն ճէվապ վերմէք վա-
թիթմիշ. հալպուքի պէշ կիւն պիւթ-
միշ օլտըղը հալտէ էլան պիւր ճէ-
վապ վերիլմէմիշ տիւր. Շու հալ-
տէ մուհարէպէ գօգուսը հըոս օ-
լընըլօր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Մ. Բէթրուզ գապինեսինին իս-
թիֆա իտեճէկիւնէ տայիր Սօֆիա.
տա պիւր վազըթտան պէրու սէօյ-
լէնիլմէքտէ օլմասընտան էգօ տէ
պալգան պահս իտիւք, շէօյլէ
իյազհաթ վերմէքտէ տիւր. «հալը
հազըրտա օ՝ սէօյլէր էուսըլը ատտ
օլունմազ. ֆաթաթ ֆապինէնին
պէօյիւք միւշքիւլաթտա պուլըն.
տըղը սահիշ տիւր. գիրա Սօպրա-
նիէ ազալարըն էքսէրիլէթի շիմ-
տիքի գապինէլէ գարշը տըրլար.
շու հալտէ Սօպրանիէի տաղըտըպ
եէնի ինթիսապաթ իյթիլգա ի-
տէճէք. լագին պուլնուլ իչիւն
տաթի էն էվէլ ինթիսապ խա-
մուրընը եուզուրմազ հարզըրմազ
իչիւն պիւթիւն հիւքիւմէթ մէհ-
մուրլարընը թէպտիլ իթմէք էլ
զէմ տիւր. Աքսի օլարագ, մէմուր-
լար իչիւն գուվէթտէ օլան եէնի
նիզմա քէյֆի սուրէթտէ մէմուր-
լարը տէկիլմէյէ միւսաօտէ վէր.
մէզ, Բէվայէթէ կէօրէ, Գապինէ
իչպու նիզմաթն թէէլիւր իսիլմէ-
սինի իսթէմիշ, ֆաթաթ Բընիս օ
եօլտա պիւր Ուքալ իմզալմազ
իսթէմէմիշ տիւր. իլմէ Գապինէնին
պէօյլէ պիւր միւշքիւլաթտա պու-
լընտըղը աշիքեար տըր. Մէմուր-
լարը թէպտիլ իթմէտէն ինթի-
սազաթըն ինթիլմէսի քէնտիսինէ
ֆաթիլէլի օլաճագ մը. մէսէլէ
պու նօգթատա տըր. էկեր ինթի-
սապարտա Բէթրուզ թարաֆտար-
լարը էքսէրիլէթ թէշքիլ իթմէլէր
Գապինէ մէմուրիլէթինէ տէվաթ
իտեր, աքսի հալտէ իսթիֆա իթ-
մէլի տիւր:

— Պազը Սօֆիա կազէթալարը
Մ. Նաշիլիլին եէնիտէն Ոթմա-
պօլա կիտէճէկիւնի վէ պու սէֆա
րէսմի սուրէթտէ Պապը Ալի իլէ
Մաթթիւնիա իչիւրինտէն տօլալը
իթիւաթ հասըլ իթմէք իչիւն միւ-
զէքէրէտէ պուլունաճաղընը եազ-
մըշլար տըր:

— Կէշէն կիւն կիւլ-թէրէտէ

Թիւրք ասկերլէրի վէ Պուլկար
սինօր մուհաթըզալարը պէյնիւնտէ
վուզու պուլան միւտաթէպէ իւզէ.
րինէ, Թիւրք ասքէրլէրին պու-
եօլըզլըղը իլք տէֆա օլմատա.
ղը սէպէպլէ, Պուլկարիա Պապը
Ալիին տըգգաթընը ճէլպ իթմիշ
տիւր:

— Բատօլապիստ. (Նիպերալ)
բարթիսի եազընտա Սօֆիատա
պիւր գօնկրէ թէճէմմիւ իտուպ,
շիմտիքի Գապինէ իլէ իթթիֆագ
իթմէք իչիւն միւզէքէրէ էլլէյէ.
ճէքլէր. էկեր պու իթթիֆագ
միւլքիւն օլուր իսէ, եէնի ինթի-
սապարտա հիւքիւլիլին պիւր
տէրէճէ իւմիւտի շապիլիւր տէյօր-
լար:

— Մաթթիւնիա սինօրընտան
չէթէլէրին կէշմէսինի մէնն իտէ.
պիլմէք պէհանէսի իլէ խալը աս.
քէր սինօր պօյընա սէվգ իտիլմիշ
տիւր:

— Պիւր ֆրանզլըզ սաթիլէ բուլ-
լա՝ չըգարան գալպազանլարըն
մուհաթէմէսի Սօֆիատա պաշլան-
մըշ տըր. մազնուլար 12 քիշի
տիւր:

— Բուսիւլը մատաճ Գօնթէս
Բուպինէր Սօֆիատա՝ սքինէ
պուլուլտըղը Օթէլ Բուսիւլտա
քէնտէ տարիլէսինտէ ուեուլմազ
իքէն, պիւր ալագ սէսի իչիտուպ
ուլանմասընտա, 15,000 ֆր. գըլ-
մէթիւտէ օլան միւճէթէրաթըն
չալընմըշ օլտըղընը կէօրիւր. ֆա-
թաթ 200 000 ֆրանզլըզ պիւր
կէրտանլըզ խըրազըն էլինէ կէշ
մէմիշ. Օթէլին պէլ խըզմէթ-
ճիլէրի թահգիգաթ ալթընա տ
լընմըշ տըր:

ՍԵՐՊԻԱ

Գրալ Բէթր Սերպիա գըրա-
լիլէթինի տէրէօհտա յուպ, թահ.
թա ճուլուսընը պիւլ էն էճէպի
հիւքիւլմաթարապալ միշ տիւր.
Ճէվապէն՝ Ալըմանիա վէ Աստրիա
իմբիւթօրլարը գրալը թէպրիգ
իթտիլէր:

— Գրալ էճէպի սէֆարէթհա-
նէլէրինէ իսպարնամէլէր եօլալապ
էլիլիլի հուզուրա գապուլ իտէճէ.
կիւնի պիւտիւրի իսէտէ, Աստրիա
վի Բուսիա է չիլէրինտէն մատա-
տիկէրլէրի կիլմէմիշլէր:

Գրալ պու լէսիլ գապուլտա
Սերպիանըն ումուլ օրտըսընա
մէթհ ու սէնալար իթմիշ, վէ Ալ-
լահըն իլլիլ իլէ էճտաթընըն թահ-
թընա ճուլուս իթտիկիւնի սէօյլէ-
միշ տիւր:

— Բուլմէն կազէթալարընա
պիւտիլիլիլիլէ պէնաէն, Մալիւ.
թոնիալա կէթիլիւրմէք իչիւն գօմի-
թալարըն Գէօսթէնտիլէ պօմպալար
սազլաթըղըն Պուլկարհիւքիւմէթի
տուլուպ, Սէքուլիլէրին խանէ.
սինի թահարրի իտէր, գօմիթա-
լար արանսըզա կէլուպ, պօմպա-
լարը սազլաթաթ թէլալընտա իքէն
պիւրի բաթլար՝ պու սէպէպլէ պիւր

գօմիթա վէ պիւր ժանտարմ թէլէթ
օլուրլար:

— Պազը Էպրոբա կազէթալարը
Ֆէլս. Բընիս գարշը սուի գաստ
հիքեայէրի ուլտուրմուշ վէ եա-
զընտա Բոնիսին Պուլկարիատան
կիտէճէկիւնի հազմ, շիւր ըտը. Ու-
ման Պիշլար պու շալէաթըն
ալ ու էասը օլտաթըղըն պիւտի-
րիօր:

— Ֆէլս. Բընիս սըրպ գրալընա
ճէվապէն պիւր թէպրիգնամէ եօլ-
լամըշ տըր:

— Ֆրանսա էլիսի պուլնտան ի-
քի կիւն էվէլ Պէլկարտա ալտէթ
իթմիշ օլաճագ:

— Աստրիա տէվէթի սըրպ
հիւքիւմէթի իլէ լէսմի մուլապէ-
րաթ վէ միւնսէպաթա պաշլամըշ
տըր:

ԱՃԵՄԻՍՏԱՆ

Չէնթ սէնէ մուզատէմ Նաս-
րէտտին Շահը գաթիլ իտէն Պապի
թապիւր օլընան թալիգաթըն շու-
սըրա թէքրար Աճէմիստանտա
պաշ կէօսթէրտիկիւնի էճէպի կա-
զէթալարը եազմագտա տըրլար:
Պապի թալիգաթընա մէնսուպ
օլմագ թէօհմէթի իլէ ալիլիլէն
Թէհրանտա պիւր սապըզ վալի,
պիւր ժէնէրալ, տիրէթթօր վէ պիւր
չօգ մէմուրլար տէրտէսթլէ հապս
օլընմըշլար:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՊՈՒԼԿԱՐԵՆ — ՇԱՅԵՆ — ՏԱՊԵՐԵՆ
30 ՐԻՆԵՑ

ԱՍՏԱՆՈՒՐ ՄԿՐՏԻՊԵՆԱՆ

Կը բաղկանայ 500է աւելի երկաթ-
նակ երեսներէ, ընտիր թուրքի վրայ
մաքուր տապգրութեամբ, պարունա-
կելով Պուլկարեհէն լեզուի գործածա-
կան գրեթէ բոլոր բառերը եւ ոճիւրը
— մօտ 30,000:

Հրատարակուած են առաջին մի
քանի պրակները եւ մնացեալին տալ-
գրութիւնը մեծ փութով յառաջ կը
տարուի, այս նպատակով կազմուած
Մասնախումբիս հսկողութեան տակ:

Բաշակոյրդալին 5 ֆր. կանխիկ
ճախըն ծախքը մեր վրայ, Տապգրու-
թիւնը երբ աւարտի, բաժանորդը
այն տոնն պիտի ստանան Բառարանը
կազմուած իսկ եթէ ուզողները ըլ-
լան, հրատարակուած պրակները հե-
տըզնտէ եւ կ'ընանք զրկել (չորսը
մէկ ծրարով):

Տապգրութիւնը աւարտելէն վերջը
գինի պիտի քարտաւանջ Պարսի փո-
խարէն նամակադրօշմ չընդունուի:

Հասցիլին մէկ մասը յատկացուած
է տեղոյս ազգ. վարժարանին:

Փափաքողք բաժանորդագրուելու
համար գրմելու են Մասնախումբիս
գանձապետին հետեւեալ հասցէով՝

Տ. Մասքիս Թալիքեան — Սօֆիա

Մանթ. — Հայաշատ քաղաքներէ
բաժանորդագրուել ուզողներ կ'ընան
գրմել նաեւ իրենց բնակած քաղաքի
թագ. իւրհրդին:

ՄԱՍՆԱՆՈՒՄԲ

Одговорились Н. Драгулев

Печатница Взаимность Варна